

Առաջին եւ երկրորդ Պաշլաուների հայրապետներու սերունդը: Թէեւ, դժբախտաբար, թուական չունի այս պատկերը, բայց ունի աս յիշատակարանը. «ի Հայրապետութեան Դանիէլի Սրբազան Կաթողիկոսի ամենայն հայոց եւ ի Պատրիարքութեան Տեառն Յօհաննու Աստուածաբան Արհիեպիսկոպոսի»: — Դանիէլ Կթղ. 1801—1808: — Յովհ. Պատրիարք, Միւլիւս, 1800—1801 եւ 1802—1813, երկու անգամ:

1745. — Ամրափակ արծաթ սրբատուփի (Մեծ. 15×10 հաստութիւն 5. ս. մ.) մը յիշատակարանը.

«Իէջ սուրբ ափիս է բարեղի / Նշխար սրբոցն գովելի / Առաքելոցն թաթէոսի / Սուրբ Կուսանացն Հռիփսիմի / Սուրբ Արիստակէս հայրապետի / բարեխօս են առ Տէրն մեր / ընդ մեղաւորս Տէրն հաշտեցի / յաւուր մեծի դատաստանի. / եմ գուսար գուղով Ոսկանի / Լէլիինսա մեղօք լի / ո՛վ սուրբ մանկունք սուրբ Սիօնի / առ ոտս սրբոց ուխտավարք / մեղաւորիս տուք ողորմի: / Եւ իմ ծնողացն Ոսկանին / եւ Սուլթա-Փաշին. եղբարցս / եւ ընտանեացս մեր եւ դուք / առնուք զանդիբք ձեր բարին / թ՛վին. Ռ՝ՃՂԴ. մեղավոր Աւետիկն»:

1756. — Ս. Լուսաւորչի Աւագ խորանի խաչկալին պատկերը, Աստուածածին, որ Յիսուս մանուկը գրկած է ձախ ձեռքով. Հնցած եւ պատուած է այս պատկերը:

Յիշատակ եղեւ պատկերս Փէրվազեան Բենկացի Նաչատուրի որդի ճամճի տիրացու Յովհաննիսին ի սուրբ Լուսաւորիչ Եկեղեցի Ռ՝ՄԵ թ՛վին»:

1761 Յունիս 16. — Ս. Լուսաւորչի գեղակերտ ու գեղարուեստական խաչկալին յիշատակարանը, որ սեւ յատակի վրայ սատարի տառերով արձանագրուած է ձուռածեւ շրջանակի մէջ եւ ճիշդ խաչկալի արուեստով: Այս յիշատակարանները հաստատուած են փոքրիկ վարագոյրը բարձող եր-